15345

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«05» 12 2022թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0182-22

Ձեռնարկողը՝ ***«ՄԻԼ ԳԱԶ» ՍՊԸ***
ք. Երևան, Մոլդովական 43

Գործունեությունը՝ ***Ջրվեժ համայնքի Զովք գյուղի գլխավոր խճուղի թիվ 25 հողամասում նախատեսվող ավտոգազալիցքավորման բազմավառելիքային կայանի կառուցման՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
Կոտայքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր եզրակացությունը՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0182-22
«05» 12 2022թ.

«ՄԻԼԳԱԶ» ՍՊԸ կողմից ներկայացված Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի Զովք գյուղի գլխավոր խճուղի թիվ 25 հողամաս հասցեում ավտոգազալիցքավորման բազմավառելիքային կայանի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ներածական մաս

Ձեռնարկող՝	«ՄԻԼ ԳԱԶ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Գործունեության կատեգորիա՝	Գ կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, գ. Զովք

Սեղմված գազով ավտոգազալիցքավորման բազմավառելիքային կայանի /ԱԳԼՃԲԿ/ կառուցման նախագիծը նախատեսվում է իրականացնել Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի Զովք գյուղի գլխավոր խճուղի թիվ 25 հողամաս հասցեում՝ «ՄԻԼ ԳԱԶ» ՍՊԸ կողմից:

Համաձայն նախնական գնահատման հայտի՝ նախատեսվում է կառուցել բնական և հեղուկ գազի կոմպրեսացված վառելիքով գազաբալոնային համակարգ ունեցող ավտոգազալիցքավորման բազմավառելիքային կետ՝ ԱԳԼՃԲԿ: Գործունեության նպատակը գազաբալոնային համակարգ ունեցող ավտոտրանսպորտային միջոցները ճնշված բնական և հեղուկ գազով, բենզինով և դիզ. վառելիքով մատակարարման իրականացումն է:

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի կողմից տրամադրված 2022թ. մայիսի 2-ի N101 նախագծման թույլտվության (ճարտարապետահատակագծային առաջադրանք) հիման վրա անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման N22042022-07-0161 վկայականով ամրագրված 0.432746 հա մակերեսով հողամասում, որի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հասարակական կառուցապատման:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի 7 կետի ա ենթակետի համաձայն նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Գ կատեգորիայի տեսակ, քանի որ որպես նախատեսվող գործունեության տեսակ բենզալցակայանները ենթակա են փորձաքննության, եթե 5 մ^3 և ավելի տարողությամբ են:

Նկարագրական մաս. ԱԳԼՃԲԿ-ն գտնվելու է Զովք գյուղի համայնքային ճանապարհին հարող թիվ 25 հողամասում՝ զբաղեցնելով 0,4327 հա: Տարածքը ազատ է շենք-շինություններից, առկա է միայն պարիսպ՝ 49.49 մ^2 մակերեսով: Մոտակա շենքը «Պեռլիտ ԱՐ» ՍՊԸ-ի գործարանն է՝ 4 արտադրական տարածքներով, որոնք գտնվում են

02543163 ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

ավելի քան 50 մ հեռավորության վրա: Այն սահմանազատվում է 2 մ բարձրությամբ քարե պարսպով: Հայցվող տարածքը Ձորաղբյուրի վարդեր ջերմոցներից գտնվում է 245 մ, գյուղատնտեսական արտադրական շինություններից (այդ թվում՝ չգործող)՝ 40 մ, մոտակա բնակելի տնից՝ 128.1 մ, համայնքային ճանապարհից՝ 8,3 մ հեռավորության վրա: Մոտակայքում ավտոլիցքավորման կայան չկա:

Գեոմորֆոլոգիական տեսակետից ուսումնասիրվող տարածքի աշխարհագրական դիրքը՝ նախալեռնային է: Օդի բացարձակ մինիմալ ջերմաստիճանը՝ -30°C, իսկ մաքսիմալը՝ +39°C: Տարեկան տեղումների քանակը կազմում է 458/528 մմ: Ստորգետնյա ջրերը գտնվում են մակերեսից 5 մ խորության վրա: Նախատեսվող գործունեության տարածաշրջանում տարածված են շագանակագույն և կիսաանապատային գորշ հողերը: Կանաչ տարածքներում բերրի հողաշերտը տատանվում է 15–25սմ սահմաններում: Տարածքն ունի հարավարևելյան թեքություն, բացարձակ նիշերը տատանվում են 1890,0-1891,0 մ սահմաններում:

Նախատեսվող գործունեության վայրը լինելով գյուղատնտեսական արտադրական գոտի, երկար տարիների ընթացքում ենթարկվել է անտրոպոգեն ազդեցությունների, ինչի պատճառով կենսաբազմազանությունը բացակայում է: Նախատեսվող գործունեության տարածքում և մերձակայքում բնության, պատմամշակութային հուշարձաններ, բնության հատուկ պահպանվող տարածքներ չկան:

Առաջարկվող նախագծով բնական գազի ավտոգազալիցքավորման ճնշակայանի շահագործման համար նախատեսված է մեքենայական մասնաշենք, հասարակական սպասարկման նշանակության մասնաշենք, որն իր մեջ ներառում է սպասասրահ, հասարակությանը և սպասարկող անձնակազմի համար սանհանգույցներ, հասարակական սպասարկման սրճարան, առևտրի սրահ, պարզագույն թաքստոց, օպերատորական սենյակներ: Պարզագույն թաքստոցը նախատեսված է 10 մարդու համար, ապահովված է բնական օդափոխությամբ, առկա է սանհանգույց և լվացարան:

Նախատեսվում է երկու հատ երկփողանի բնական գազի լցասյունակներ՝ մեկ ընդհանուր մետաղական ծածկով, ստորգետնյա գազի կուտակիչ հոր: Հեղուկ գազի լիցքավորման կայանի շահագործման համար նախատեսված է մեկ հատ երկփողանի բաշխիչ, ինպես նաև V=10 մ տարողությամբ ստորգետնյա հեղուկ գազի գազամբար: Հեղուկ վառելիքի լիցքավորման կայանի շահագործման համար նախատեսվում է երկու հատ երկփողանի հեղուկ վառելիքի լցասյունակ, (որից մեկ հատը բենզինի, իսկ մյուսը դիզ. վառելիքի համար), ինչպես նաև երկու հատ 3 մ^3 և 5.5 մ^3 տարողությամբ հեղուկ վառելիքի տարաների համար հոր: Գազալցակայանի ստորգետնյա բունկերում տեղադրվելու է յուրաքանչյուրը 400լ տարողությամբ 7 բալոն: Հակահրդեհային պաշտպանությունը իրականացվելու է հակահրդեհային հիդրանտների միջոցով: Տարածքում իրականացվելու է շանթապաշտպանություն: Բոլոր նոր կառուցվող մասնաշենքերն իրականացվում են ե/բ կրող կոնստրուկցիաներով, քարե պարփակող պատերով: Մեքենայական մասնաշենքի և լցասյունակների ծածկերը նախատեսված է իրականացնել մետաղական թեթև կոնստրուկցիաներով:

Համաձայն նախնական գնահատման հայտի՝ ավտոգազալիցքավորման բազմավառելիքային կայանի շինարարությունը իրականացնվելու է 12 ամսվա ընթացքում, շինարարական աշխատանքներում մասնակցելու է ընդհանուրը՝ 18 մարդ: Նախատեսվող գործունեության տարածքում շինարարական աշխատանքների ընթացքում օգտագործվելու են տեխնիկական միջոցներ՝ էքսկավատոր, բեռնատար, բետոնխառնիչ մեքենաներ, ինքնաթափ, ավտոկռունկ, որոնց լիցքավորումը և տեխ. սպասարկումը իրականացվելու է շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում: Շինարարական նյութերից օգտագործվելու են երկաթբետոն, մետաղ, փայտանյութ, խիճ, քար, ավազ և այլն:

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԻՉԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Ապրանքային բետոնը շին. հրապարակ է տեղափոխվելու պատրաստի վիճակում՝ բետոնատար ինքնաթափերի միջոցով ավտոմատ բետոնա-շաղախային հանգույցից:

Շինարարության ժամանակ բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ աշխատանքային հարթակի ջրցանի, հանված գրունտի և ստացվող ավազի ու խճի խոնավեցման, ինչպես նաև շինարարական անձնակազմի խմելու և կենցաղային նպատակների համար: Շին. անձնակազմի կենցաղային և տնտեսական նպատակներով ջրածախսը կազմում է 152.3 խմ/շին. ժամ., արտադրական նպատակներով ջրի ծախսը՝ 112.5 խմ/շին. ժամ., ընդամենը ջրօգտագործումը կկազմի 264.8 խմ/շին.ժամ.: Շինարարական աշխատանքների ընթացքում խմելու և կենցաղային կարիքների համար անհրաժեշտ ջրային քանակը նախատեսվում է բերել հատուկ նախատեսված ավտոմեքենաներով՝ պայմանագրային հիմունքներով: Անձրևների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերը ուղղորդվելու են մեկ բակային ցանց, հեռացումն իրականացվելու է տարածքում գոյություն ունեցող սելավատարների միջոցով:

Շահագործման փուլում ջուրն օգտագործվելու է կենցաղային և կոմպրեսորների հովացման համակարգի նպատակով: Հակահրդեհային ցանցի հաշվարկային պահանջվող ջրի քանակության համար կնախատեսվի ջրի պաշարապահ ծավալ 50 խմ տարողությամբ:

Տարածքում կոյուղու համակարգը բացակայում է: Նախագծվել է ջրամատակարարման, կոյուղու և ջրահեռացման ցանցեր: Գազալիցքավորման բազմավառելիքային կայանում առաջացող կենցաղային կեղտաջրերի համար նախատեսվել է անջրաթափանց հոր 2.25 մ^2 մակերեսով, հակահրդեհային ջրի իրացումը կիրականացվի գործող ջրատարով:

Համաձայն նախնական գնահատման հայտի՝ հայցվող տարածքում հողի բերրի շերտը բացակայում է: Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում ԱԳԼՃԲԿ-ի և օժանդակ շինությունների կառուցման համար առաջանալու է 60 մ^3 ծավալով հողային հանույթ, որն էլ ամբողջությամբ օգտագործվելու է ավտոլիցքավորման կայանի շրջակա տարածքի հարթեցման և բարեկարգման համար: Հետլիցքի իրականացման համար օգտագործվելու են օգտակար հանույթի փափուկ բնահողերը:

Շինարարական աշխատանքների ընթացքում առաջանալու են թափոններ՝ կենցաղային և շինարարական աղբի տեսքով: Կենցաղային աղբը կհավաքվի աղբահավաք տարաներում և կտեղափոխվի մոտակա աղբավայր, շինարարական աղբը (50 մ^3) կպահվի պոլիէթիլենային պարկերում բետոնե հարթակի վրա և ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից շինթույլտվությամբ հատկացված վայր: Քսայուղերի, հեղուկ վառելիքի հնարավոր մնացորդային քանակների առաջացման իրավիճակում /որոնց քանակը կարող է կազմել առավելագույնը 30 լ/շին.ժամ./ նախատեսվում է պահել հատուկ անթափանց և փակ տարաներում ավազե, մետաղական կամ բետոնե հիմքերի վրա, ինչը կբացառի արտահոսքը հողային համակարգերի վրա և հնարավոր աղտոտման ռիսկերը: Նշված նյութերը որպես երկրորդային նյութ կվերաօգտագործվեն շինարար կապալառուի կողմից այլ աշխատանքներում կամ կհանձնվեն նշված թափոնները մշակող լիցենզավորված կազմակերպություններին:

Նախատեսվող գործունեության շահագործման ընթացքում արտադրական թափոնների քանակը կազմելու է 120 կգ/տարի և ներառելու է հետևյալ նյութերը՝ սիլիկագել՝ 40 կգ, յուղ՝ 80 կգ: Յուղորսիչներում կլանված յուղը հավաքվելու է մետաղյա տարաներում և օգտագործվելու է գազալցակայանի սարքավորումների շարժիչների յուղման նպատակով:

Շահագործման փուլում ավտոգազալցաճնշակայանի գազամատակարարումը կատարվելու է ԳԲԿ Ջրվեժ-Զովք սնող մ/ճ ս/գ գազատարից՝ D133 մմ տրամագծով 220 մ վերգետնյա խողովակով:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է ԱԳԼՃԲԿ-ի տարածքը կանաչապատել և բարեկարգել՝ առաջնորդվելով ՀՀ կառավարության 08.02.2018

02543163 ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

թվականի N108-Ն որոշման դրույթներով: Կանաչապատման աշխատանքների շրջանակում նախատեսվում է երթևեկելի հատվածների, անցուղիների ասֆալտապատում, մայթերի ստեղծում, բազալտե եզրաքարերի իրականացում: Կանաչապատման ենթակա տարածքի մակերեսը կազմում է 870 մ² (20%): Նախատեսվում է տնկել տարբեր տեսակի՝ տարածաշրջանին բնորոշ թփատեսակներ (սովորական եղրևանի, վարդի տեսակներ), իրականացվելու է նաև ճմապատում և սիզամարգերի ստեղծում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և համայնքապետարանի համաձայնությամբ: Նորաստեղծ կանաչ գոտիներում անհրաժեշտ սևահողը կմատակարարվի Ջրվեժ համայնքի ղեկավարի հետ համաձայնեցված:

Համաձայն նախնական հայտի ԱԳԼՃԲԿ-ն կառուցվելու և շահագործվելու է ՀՀ-ում գործող օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան:

Նախատեսվող գործունեությունը կատարվելու է երկարամյա մարդածին ազդեցության գոտում, ինչը չի առաջացնելու շրջակա միջավայրի վրա լրացուցիչ ազդեցություններ: Ազդեցությունները հիմնականում կապված են լինելու՝ քանդման, փորման, բեռնման, հողային, բետոնային աշխատանքների, թափոնների տեղափոխման, շինարարական տեխնիկայի շահագործման, ճանապարհների ծանրաբեռնվածության, արտակարգ իրավիճակների առաջացման հետ:

Համաձայն նախնական գնահատման հայտի նախատեսվում են օդային ավազանի, հողային և ջրային ռեսուրսների աղտոտումից պահպանման, դրանց արդյունավետ օգտագործման, թափոնների կառավարման, աղմուկի մակարդակի, արտակարգ իրավիճակների ռիսկի նվազեցմանն ուղղված ԲԿ պլանով բնապահպանական միջոցառումներ, այդ թվում՝

- օդային ավազան փոշու արտանետումները նվազագույնի հասցնելու նպատակով շինհրապարակի պարբերաբար ջրցանում;
- սորուն շինարարական նյութերի դեպքում (ավազ, խիճ, հող և այլն) տեղափոխում փակ ծածկով մեքենաներով, սորուն նյութերի պահեստների ծածկում համապատասխան բարձրությամբ թաղանթով,
- շրջակա տարածքները (մայթերը, ճանապարհները) պետք է զերծ պահվեն շինարարական աղբից՝ փոշին նվազագույնի հասցնելու նպատակով,
- հատուկ տարողությունների կիրառում շինարարական աղբի հեռացման համար, տարողությունները տեղադրվելու են տարածքում և կանոնավոր կերպով (ամենուշը երկու օրը մեկ) վարչական շրջանի կամ աղբահանող ընկերության հետ կնքվող պայմանագրի հիման տեղափոխվելու հանրային աղբավայր՝ կուտակումներից խուսափելու նպատակով,
- գոյացող թափոնների տարանջատում ընդհանուր աղբից և կենցաղային թափոններից դեռ շինհրապարակում և ըստ առաջացման տեղափոխում հատուկ հատկացված աղբավայր,
- շինարարական նյութերի և քսայուղերի ժամանակավոր պահեստների տեղադրում բետոնապատ մակերեսի վրա,
- շինարարական աշխատանքներից գոյացած աղմուկը կսամանափակվի թույլատրված ժամերի միջակայքում հնարավորինս նվազագույնի հասցնելով բնակելի տարածքներում աղմուկը և ճանապարհների առավելագույն բեռնվածությունը,
- ապահովել հայտում նախատեսված գործունեության շինարարական հրապարակից դուրս եկող ավտոմեքենաների անվադողերի լվացման, շինարարական հրապարակների պարսպապատման, ներքուստ և արտաքուստ վերանորոգվող շենքերի և շինությունների համապատասխան բարձրության անթափանց թաղանթով ծածկման միջոցառումները;
- շին. մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով:

02543163 ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

բացառելով անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը;
- փոշու, աղմուկի և թրթռումների մակարդակի հսկողություն գործիքների չափագրմամբ՝ անհրաժեշտության դեպքում;
- շին. հրապարակում համապատասխան տեղեկատվական վահանակների տեղադրում, աշխատողներին հիմնական կանոնների և նորմերի վերաբերյալ իրազեկում;
- կատարել կանաչապատման/բարեկարգման աշխատանքներ՝ համաձայն բարեկարգման նախագծի;
- ձեռնարկել տնկված թփերի, խոտածածկի պահպանումը և մոնիթորինգը՝ բուսականության բարձր աճն ապահովելու համար:

Պատճառաբանական եզրահանգումներ. Համաձայն նախնական հայտի՝ ԱԳԼՃԲԿ-ն կառուցվելու և շահագործվելու է ՀՀ-ում գործող օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան: Հայտում առկա է ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) դրական կարծիքը:

Շրջակա միջավայրի վրա ազդեցությունները լինելու են շինարարության փուլում և կրելու են ժամանակավոր բնույթ: Նախնական գնահատման հայտով նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում կբացառվեն կամ կնվազեցվեն շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները:

Փորձաքննական գործընթացին ներգրավվել են առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, քաղաքաշինության, կադաստրի կոմիտեները, Կոտայքի մարզպետարանը, Ջրվեժի համայնքապետարանը, Զովք գյուղի վարչական շրջանը, շրջակա միջավայրի նախարարության համապատասխան ստորաբաժանումները, «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ը: Հայտը լրամշակվել է նաև ստացված դիտողությունների և առաջարկությունների հիման վրա:

Օրենսդրությամբ սահմանված կարգով Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի Զովք գյուղի ղեկավարի նստավայրում իրականացվել է 2 (երկու) հանրային քննարկում, ինչի ընթացքում հանրությունը դրական է արտահայտվել նախատեսվող գործունեության վերաբերյալ:

Փորձաքննական պահանջներ

- Մինչև գործունեության իրականացումն անհրաժեշտ է օրենսդրությամբ սահմանված կարգով ստանալ համապատասխան համաձայնությունները և թույլտվությունները:
- Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է հետևել նախնական գնահատման հայտով ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, ժամանակացույցին, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ուղղված բնապահպանական և շինարարական նորմերի պահպանմանը:
- Անհրաժեշտ է ապահովել նախնական գնահատման հայտով ամրագրված կանաչապատման աշխատանքների իրականացումը և խնամքը:
- Անհրաժեշտ է ավտոգազալիցքավորման բազմավառելիքային կայանի կառուցման աշխատանքային նախագիծը «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին>> օրենքով սահմանված կարգով նեկայացնել տեխնիակկան անվտանգության փորձաքննություն:
- Ապահովել ՀՀՇՆ 30-01-2014 «Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի XVI բաժնի

02543163
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

311-րդ կետով սահմանված պահանջները:

- Պահպանել ավտոգազալցակայանների կառուցման և շահագործման տեխնիկական անվտանգության կանոնները՝ համաձայն ՀՀ կառավարության 2022 թվականի հուլիսի 21-ի N 1131-Ն որոշման:
- Նախատեսվող գործունեության ընթացքում ջրօգտագործումը իրականացնել՝ առաջնորդվելով ՀՀ Ջրային օրենսգրքի պահանջներով:
- Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների կուտակումն ու հեռացումն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Ջրվեժի համայնքապետարանի հետ համաձայնեցված:
- Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում պահպանել Առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջները:
- Համաձայն ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշամն 43-րդ կետի «Հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին»:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«ՄԻԼ ԳԱԶ» ՍՊԸ կողմից ներկայացված Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի Զովք գյուղի գլխավոր խճուղի թիվ 25 հողամաս հասցեում ավտոգազալիցքավորման բազմավառելիքային կայանի կառուցման՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտին տրվում է դրական եզրակացություն՝ փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջին կարգի մասնագետ՝ Աստղիկ Վարդանյան